

Բեռլինի տեղեկատվության և փաստավավերագրության հայկական կենտրոնից: Առանձնապես ցնցող տպավորություն են թողնում էրզրումի՝ 1895 թվականի կոտորածներին զոհ գնացած հայերի զանգվածային թաղումը, թուրքական բանակի հայ զինվորների դիակուլյտերը, ինչպես նաև բռնագաղթի զանազան դրվագները պատկերող՝ Արմին Վեգների, ականատեսներ՝ Յակոբսոնի, Հոֆմանի լուսանկարները, որոնք մեծ մասամբ անժանոթ, կամ սակավ ծանոթ են հանրությանը: Գրքում զետեղված են քարտեզներ:

### Հ.Ֆիրբյուխեր, Հայաստան - 1915. գերմանացի սպայի վկայությունը. Երևան, «Փյունիկ» հրատ., 1995, 64 էջ

Գրքույկի նախաբանը գրել է Միքայել Գրիգորյանը՝ բնաբան ընտրելով Ֆիրբյուխերի հետևյալ տողերը. «Թող այս փոքրիկ գիրքը հայ նահատակների համայնական գերեզմանին դրված համեստ խաչքար դառնա»:

Թարգմանչի՝ Գ.Ջանիկյանի խոսքում համառոտ տեղեկություններ են տրված հեղինակի՝ Ֆիրբյուխերի մասին: Նա ծնունդով գերմանացի է, եղել է Թուրքիայում գերմանական զինվորական առաքելության գերագույն հրամանատար Լիման Սանդերսի թարգմանիչը: Ֆիրբյուխերը ականատես է եղել հայերի ցեղասպանության սահմնկեցնող անցքերին, 1915թ. Գերմանիայում լույս է ընծայել իր գիրքը, որն իսկույն բռնագրավվել ու ոչնչացվել է: Հետագայում վերահրատարակվել է, թարգմանվել ֆրանսերեն:

Գիրքը բաղկացած է 25 կարճ հատվածներից՝ շաղկապված ներքին տրամաբանությամբ: Ունի վերջաբան, երբեմնի Սեծ Հայաստանի գծագիր քարտեզով: Առաջին հատվածի «խաչքար» խորագիրը հեղի-

նակի յուրօրինակ առաջաբանն է:

«Ո՛ւն է հայտնի առաջին համաշխարհային պատերազմի տարիներին խոշտանգված ու խաչված այս ժողովրդի ճակատագիրը...» հարույունն ուղղված է, այսպես կոչված, քաղաքակիրթ աշխարհին:

«Գիտե՛ք արդյոք, որ մարդ-գազանի չարագործության բարձրակետը... գտնվում է... Կովկասի կիրճում: ... Երզնկայի և Սվազի միջև գտնվում է Զեմախի կիրճը»: 1915թ. հունիսին նրա գլխապետույտ բարձունքից տասնյակ հազարավոր կանանց ու երեխաների աննկարագործելի տանջանքների ենթարկելուց հետո ողջ-ողջ ցած նետեցին: Այդ ճորն իրավամբ դանթեական կարելի է կոչել, որովհետև հիշեցնում է Կանեծքի այն վիճը, որ Դանթեն նկարագրում է «Դժոխքում»: Զեմախի կիրճը հեղինակը համարում է «ամոթալի խարան», որ պիտի մնա իբրև անբերկրազնդի հիշողության դաշտ, որպեսզի «մարդկությունը գիտակցի իր մեղսակցությունը, հանցանքը քավելու պարտավորվածությունը ունենա, քանի որ ամենաարյունոտ ոճիրները այստեղ են գործվել...»:

«Հայերի Վիլհելմ Տելը»-Շիլլերի հերոսի անունն է տրվել հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանին, որի անվրեպ գնդակից սպանվեց Թալիաթը: Ս. Թեհլերյանին արդարացրեց Բեռլինի երդվյալների ատյանը: «Այս դատավճիռը գերմանական արդարադատության պատմության փառավոր էջն է», - գրել է Ֆիրբյուխերը:

«Կարմիր սուլթանը...» հատվածում հեղինակն անդրադարձել է Թուրքիայի և Գերմանիայի մերձեցման պատճառներին և փոխադարձ կապերին՝ Վիլհելմ 2-րդի և Սուլթան Համիդի մտերմությանը՝ գրեթե հավասարության գիծ քաշելով այս ոճրածին տիրակալների միջև:

«Աբդուլ Համիդի խաղը արյունոտ իրականությունն էր, Վիլհելմինը, որքան էլ խեղկատակություն թվար առաջին հայացքից, երկրազնդի կեսի համար ողբերգության վերածվեց», - գրում է հեղինակը: Այնուհետև հեղինակը նշում է այն մասին, որ գերմանական լրատվական գործակալությունները, կեղծելով իրականությունը, ստեղծում են թուրքերի երևակայական պատկերը, լուսապսակ դնելով նրանց ճակատին, այնինչ նրանք իրականում այլամերժ ու դաժան մարդիկ են:

«Երբ Աբդուլ Համիդի, առանց այն էլ հիվանդագին երևակայությունը ֆրանսիական հեղափոխության մանրամասներից շատ էր բորբոքվում, - գրում է հեղինակը, - իսկույն հրամայում էր կոտորել հայերին, և հաջորդ օրն արդեն Ստամբուլի, Ադանայի փողոցները դիակներով էին ծածկվում»: Մարդ սպանելը թուրքի արյան մեջ է, եզրակացնում է հեղի-

նակը: Հարյուրամյակներով արձատագած այդ հոգեբանության դժնի դրսևորումն էր հայերի ցեղասպանությունը: Երիտթուրքերն, ամեն առումով, «ծեր» թուրքերի ժառանգորդներն էին և ոչ մի միջոցի առաջ կանգ չէին առնում, որպեսզի վերականգնեն երկրի երբեմնի ուժն ու հզորությունը, մյուս ժողովուրդների հետ այնպիսի դաժանությամբ վարվեն, ինչպես իրենց նախորդներն էին վարվել:

«Գերմանիայի համար ամոթ էր նման ոհմակի՝ եվրոպական սանրվածքով ոճրագործների հետ դաշնակցելը, որոնք միմիայն հարմար պահի էին սպասում, որպեսզի իրագործեն բոլոր ժամանակների ամենամեծ կոտորածներն ու թալանը»:

«Հայ ժողովուրդը» հատվածում Յ. Ֆիրբյուխերը, համառոտակի անդրադառնալով հայերի դարավոր պատմությանը, ընդգծում է նրանց նպաստը երիտթուրքերին՝ հեղաշրջման գործընթացում, ապա և նշում հայերի հիասթափության ու հարկադրված գոյամարտի մասին: Դառնալով երիտթուրքերի կառավարության գործունեությանը, հեղինակը նշում է, որ նրանք ոչ միայն որդեգրեցին Աբդուլ Համիդի քաղաքականությունը, այլ անբավարար գտնելով այն, խորացրին, տարվեցին ծավալապաշտական երազներով, Մեծ Թուրանի գաղափարով և սաստկացրին ու բազմապատկեցին քրիստոնյա ժողովուրդների, մասնավորաբար՝ հայ ժողովրդի հալածանքը, որը կանգնած էր Մեծ Թուրանի մինչև Չինաստան ձգվող ճանապարհի վրա:

«Թալեաթ փաշայի մեզ հասած հրամանները միանշանակ հաստատում են, որ իշխանությունների նպատակը հայ ժողովրդին ոչ թե տեղահանելը, այլ բնաջնջելն է եղել»: Այնուհետև հեղինակը պատմում է տեղահանության և կոտորածների մասին, որոնք կատարվում էին մարդկությանը տակավին անհայտ դաժան եղանակով:

Հեղինակն անդրադարձել է Ազգերի Լիգայի դատապարտելի անտարբերությանը, որը չօգնեց հայ ժողովրդին:

«Հայ ժողովրդին դավաճանեցին, խաբեցին ու լքեցին»-այս խոսքերով է ավարտում իր գրքույկը գերմանացի սպա Հայնրիխ Ֆիրբյուխերը: